

Ջանգուածային մահմետականացում՝ մեղաժ է հոս 1643ին, երբ՝ ինչպէս կը գրէ Յակոբ Կարնեցի, Զաֆար մօլլայ աշխարհագիր ընելով «արար դաւտար եւ կապեաց ծանր խարած»։ Հայոց այն մասն, որ թէեւ ազգաւ եւ լիզուաւ հայ էր, բայց վրական եկեղեցւոյ կը վերաբերէր, «ի յահէ խարածին Դարչան յօրէն» Մահմէտի ։ Յակոբայ Կարնեցւոյ խօսքն ասոնց մասին որոշու պայծառ է. «Էին բնակիչք երկրին կէսն հայ ազգաւ, եւ կէսն էրօնի—+ վրացի, Բայց հայի լիզուա— իօռէին», (Յակ. Կարն., էջ 17—18)։ «Հայ ազգաւ», եւ «կրօնիւք վրացի», հակադրու թիւն են կրօնական տեսակէտով, ոչ թէ ազգային, ինչպէս արդէն «հայի լիզուա», կը ցուցնէ¹։ Ասոնք «վրացի», էին այնպէս՝ ինչպէս վերն արդէն տեսանք նաեւ այսօր „Firengi“ կամ «Փրանկ», Հայեր։ Ինչպէս Բիւզանդեանց իշխանու թեան ներքեւ ունեցած ենք նաեւ շատ բազմաթիւ «հոռոմ», Հայեր, որոնցմէ այսօր ալ կան՝ յունածէս, բայց տակաւին հայախօս Հայ-

¹ Այս դիտողութիւնը կ'ընենք, որովհետեւ Mac'er տարակուսական բժրունած է եւ թէեւ հարցա-կանով՝ թարգմանած է թէ նաեւ այս «վրացիք, բլան par moitié... en tant que race et religion (?), Կարնեցւոյն խօսքն այս իմաստը չունի եւ չէր կրնար ունենալ։